

ՓՈՒՆՄԱՐՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՈՐՏՆԵՐՈՒՄ
ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԼՎԱԶԵՑՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ,
“ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԼՎԱԶԵՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ” ՀԻՄՆԱԴՐԱՄԻ,
ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ԳՐԱՄԵՆՅԱԿԻ,
ՕՔՍՖԱՄԻ,
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԵՅՎ ԴԸ ՉԻԼԴԻԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

Հիմք ընդունելով

- Հյոգոյի գործողությունների 2005-2015 թթ. ծրագրի առաջնայնությունները,
- Հայաստանի Հանրապետության Կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը,
- Հայաստանի Հանրապետության Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությունը,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ. դեկտեմբերի 10-ի թիվ 1694-Ն որոշումը «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամ հիմնելու մասին,
- ՄԱԿ-ի և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև ստորագրված “Միավորված ազգերի կազմակերպության զարգացման աջակցության 2010-2015 թթ. ծրագիրը”,
- Հիմնական կրթության երեխայի զարգացման ոլորտում ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի 2012-2013 թթ. շարունակական աշխատանքային ծրագիրը,

Ինչպես նաև հաշվի առնելով, որ Եվրոպական հանձնաժողովի Մարդասիրական օգնության և բաղաբացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության կողմից (այսուհետ՝ ԵՀ) Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակը (այսուհետ՝ ՄԱՄՀ), ՕՔՍՖԱՄ-ի, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (այսուհետ՝ ՀԿԽԸ) և Մեյվ դը չիլդրեն ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչությունը (այսուհետ՝ Մեյվ դը չիլդրեն) ընտրվել են որպես Աղետների ռիսկերի կառավարման տարածաշրջանային ծրագրի հայաստանյան բաղադրիչի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացնող կազմակերպություններ,

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ ԱԻՆ), ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ ԿԳՆ), “Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմ” հիմնադրամը (այսուհետ՝ ԱՌՆԱՊ), ՄԱՄՀ-ն, ՕՔՍՖԱՄ-ը, ՀԿԽԸ-ն և Մեյվ դը չիլդրենը (այսուհետ՝ Կողմեր) կնքելով սույն Փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ ՓՀ)՝ ցանկանում են համագործակցել՝ աջակցելով աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) ոլորտում կրթական և համայնքային զարգացման ծրագրերի իրականացմանը և համաձայնության են եկել հետևյալի շուրջ.

Հոդված 1. Հուշագրի նպատակը

1.1 Սույն ՓՀ-ն սահմանում է Ծրագրի իրականացնող կազմակերպությունների գործողությունների շրջանակը, ինչպես նաև Կողմերի պարտավորություններն ու համագործակցային պայմանավորվածությունները՝ ԱՌՆ կրթության և համայնքային զարգացման ոլորտում:

1.2. Սույն ՓՀ-ի նպատակն է նպաստել ԱՌՆ ազգային ռազմավարության հիման վրա կրթության ոլորտում և տեղական մակարդակում ԱՌՆ գործողությունների ծրագրի մշակման և Ծրագրի գործողությունների իրականացմանն ուղղված Կողմերի ջանքերի համատեղմանը, միջոցների առավել արդյունավետ և նպատակային օգտագործմանը, ինտեգրված և ներդաշնակեցված մոտեցումների դրսևորմանը:

Հոդված 2. Համագործակցության պայմանները

2.1. Ծրագրի գործողությունների իրականացումը համակարգվում և մշտադիտարկվում է Կողմերի ներկայացուցիչներից բաղկացած Համակարգող խորհրդի (այսուհետ՝ ՀԽ) կողմից: ՀԽ-ն ուղղորդում է Ծրագրի ռազմավարությունը և նպաստում դրա իրականացմանը:

1. պարբերական հանդիպումների ու Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկությունների փոխանակման,
2. ընդհանուր նախաձեռնությունների վերաբերյալ համաձայնության գալու,
3. փոխհամաձայնեցված և պլանավորված մշտադիտարկման, ծրագրի իրականացման գնահատման միջոցով:

2.2. ՀԽ կազմը բաղկացած է հետևյալ անդամներից.

- ԱԻՆ և ԿԳՆ փոխնախարարներ, ՀԳԾ համակարգողը, ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ռեկտորը համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներ,
- ԱՌՆԱՊ տնօրեն,
- Իրականացնող կազմակերպությունների ղեկավարներ, ԱՌՆ ծրագրի պատասխանատուներ:

2.3. ՀԽ-ի հանդիպումները տեղի են ունենալու յուրաքանչյուր եռամսյակ առնվազն մեկ անգամ: ՀԽ հանդիպումները նախագահում են ԱԻՆ և ԿԳՆ փոխնախարարները հերթականությամբ: ՀԽ հանդիպումների արձանագրությունները կազմվում են Կողմերի կողմից՝ հերթականությամբ:

Հոդված 3. Կողմերի հիմնական պարտավորությունները

3.1. ԱԻՆ և ԿԳՆ պարտավորությունները հետևյալն են.

1. Յուրաքանչյուր իրականացնող կազմակերպության մասով սահմանված աշխատանքային ծրագրերում ամրագրված գործողությունների իրագործման համար ապահովել ինստիտուցիոնալ աջակցություն, այդ թվում՝ իրենց ենթակայության կազմակերպությունների միջոցով:
2. Անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան պետական հաստատությունների, միջազգային կազմակերպությունների, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ մասնակցել Հյոգոյի գործողությունների ծրագրի (այսուհետ՝ ՀԳԾ), ԱՌՆ ազգային ռազմավարության և ՀՀ Կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագրի խթանման համատեղ աշխատանքներին:

3.2. ԱՌՆԱՊ-ի պարտավորությունները հետևյալն են.

- կազմակերպում է ՀԽ հանդիպումները,
- ապահովում է կրթության և համայնքային զարգացման ոլորտում ազգային համակարգող մեխանիզմի՝ ԱՌՆ թեմատիկ խմբերի աշխատանքները,
- ներգրավում է ԱՌՆ և կրթության ոլորտների ղերակատարներին ԱՌՆԱՊ-ի կողմից կազմակերպվող նախաձեռնություններին,
- նպաստում է Կողմերի մշակած շահերի պաշտպանության համատեղ պլանի իրականացմանը,
- տրամադրում է արդի տեղեկություններ ԱՌՆ ոլորտին առնչվող աշխատանքների, լավագույն փորձի և ԱՌՆ ազգային համա կարգում զարգացումների վերաբերյալ,
- նպաստում է իրականացվող գործողությունների թափանցիկությանը,
- մասնակցում է իրականացվող գործողությունների արդյունքների գնահատման աշխատանքներին,
- պատրաստում և ՀԽ քննարկմանն է ներկայացնում է Ծրագիրն իրականացնող կազմակերպությունների ընդհանուր արդյունքների հաշվետվությունների վերլուծություն և կատարում համապատասխան առաջարկներ:

3.3. Իրականացնող կազմակերպությունների պարտականությունները հետևյալն են.

- Տրամադրել ֆինանսական աջակցություն աշխատանքային ծրագրերում նկարագրված գործողությունների համար, որոնք մշակվել են ԱԻՆ-ի և ԿԳՆ-ի հետ համատեղ և կցված են սույն հուշագրին:

- Ժամանակին ապահովել Օրագրի գործողությունների կազմակերպումը՝ աշխատանքային ծրագրերին համապատասխան: Ապահովել Օրագրի գործողությունների իրականացման մշտադիտարկումը և զեկուցել առաջընթացի մասին ՀԽ-ին:
- Աջակցել ԱՌՆ ազգային ռազմավարության, ՀԳՕ, Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրի դրույթների և դրանց առաջնայնությունների իրականացմանը կրթության ոլորտում և համայնքներում:
- Հայաստանում կամ տարածաշրջանային մակարդակով կազմակերպվող նախաձեռնությունների մասին ժամանակին տեղեկացնել ՀԽ անդամներին և առկա ֆինանսական միջոցների շրջանակներում խթանել Կողմերի և այլ շահակիցների մասնակցությունը:
- ԱՌՆԱՊ-ի շրջանակներում Կողմերի և այլ շահակիցների մասնակցությամբ պարբերաբար հանդիպումներ կազմակերպել՝ գործողությունները համակարգելու, տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակման նպատակով:
- Պարբերական հանդիպումների, խորհրդակցությունների և վերապատրաստումների միջոցով նպաստել կրթական և աղետներին պատրաստվածության քաղաքականության ու օրենսդրության մեջ երեխայակենտրոն ռազմավարության ներառմանը:
- Նպաստել աղետների ռիսկերի նվազեցմանը նվիրված կրթական, տեղեկատվական և հաղորդակցական նյութերի մշակմանը, բարելավմանն ու հրատարակմանը (գրքույկներ, ուսումնական նյութեր, տեղեկատվական թերթիկներ, լրատվական նյութեր և այլն)՝ տեղական, ազգային և (կամ) ենթատարածաշրջանային իրազեկման արշավների և ուսուցման համար:
- Պարբերական հանդիպումների, վերապատրաստումների, վարժանքների և աղետների ռիսկի նվազեցման այլ գործողությունների միջոցով նպաստել ԱՌՆ համակարգերի և կարողությունների զարգացմանն ու հզորացմանը համայնքային մակարդակում:

Հոդված 4. Օրագիրն իրականացնող կազմակերպությունների աշխատանքի ոլորտները՝

4.1. ՄԱՄՀ-ը .

1. Նպաստել, որ ազգային և տեղական իշխանությունները, ինչպես նաև ԱՌՆ գործընկեր կառույցները ունենան միասնական մոտեցում ԱՌՆ-ի վերաբերյալ և աջակցեն կրթության քաղաքականության և ծրագրերի մեջ ԱՌՆ-ի ներդրմանը:
2. Նպաստել ազգային և տեղական իշխանության պաշտոնյաների, ԱՌՆ գործընկերների, դպրոցների, դրանց վարչական կազմի, ուսուցիչների և սովորողների կարողությունների հզորացմանը՝ կրթության մեջ ԱՌՆ իրականացման առումով:
3. Աջակցել աղետավտանգ վայրերից ընտրված դպրոցներին և նախադպրոցական հաստատություններին արդյունավետորեն մշակել և իրականացնել աղետների պատրաստվածության և ռիսկերի նվազեցման պլանները:
4. Աջակցել արտակարգ իրավիճակներում երեխաներին հոգեբանա-սոցիալական աջակցության ազգային մեխանիզմի հիմնմանը՝ սահմանելով դրա իրականացնողների դերերն ու պատասխանատվությունները:

4.2. ՀԳՕՆ-ն.

Նվազեցնելու է աղետավտանգ և բնական աղետներից տուժած գոտիներում ապրող բնակչության խոցելիությունը՝ աջակցելով ՀՀ ԱՌՆ ազգային ռազմավարության իրականացմանը, մասնավորապես .

- Հզորացնել և ամրապնդել Շիրակի մարզի 14 թիրախ համայնքների պատրաստվածության և արձագանքման կարողությունները՝ ինչի արդյունքում տեղական բնակչությունն ավելի լավ պատրաստված կլինի արձագանքել բնական աղետներին:
- Թիրախ համայնքներում բարձրացնել առավել տարածված տեղական աղետների և կլիմայի հավանական փոփոխության ազդեցության վերաբերյալ իրազեկման մակարդակը: Արդյունքում համայնքի բնակչությունը կլիմանա, թե ինչպես նվազեցնել իրենց ընտանիքների և դպրոցական միջավայրի խոցելիությունը բնական աղետների նկատմամբ:
- Մշակել “Աղետների ռիսկի նվազեցման համայնքային մոդել”, որը կվավերացվի և կհաստատվի ԱՌՆԱՊ-ի շրջանակներում գործող հիմնական գործընկերների շրջանակում:
- Բարձրացնել ԱՌՆ և կլիմայի փոփոխության վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը:

- Նպաստել Հարավային Կովկասում ԱՌՆ ոլորտում համագործակցության ամրապնդմանը՝ լավագույն փորձի և քաղաճ դասերի լուսաբանման և փորձի փոխանակման միջոցով:

4.3. ՕՔՄՖԱՄ-ը.

Աղետների ռիսկերի նվազեցման համայնքահեն մոդելի ստեղծման միջոցով աջակցելու է աղետների նկատմամբ համայնքների դիմակայունության բարձրացմանը և նպաստելու է այդ մոդելի ներդրմանը ազգային մակարդակում: Մասնավորապես՝

- Վայոց Ձորի մարզի ընտրված 10 համայնքներում զարգացնել բնակիչների (մասնավորապես կանանց) կարողությունները՝ աղետների ժամանակ առավել խոցելի բնակչության (ներառյալ կանանց, տղամարդկանց, երեխաների ու տարեցների) կարիքները վերհանելու և դրանց լուծումներ տալու նպատակով:
- Ընտրված խոցելի համայնքներն աղետների ժամանակ դարձնել առավել դիմակայուն ԱՌՆ պլանավորման, մեղմացման ու ադապտացման միջոցով:
- Բարձրացնել ԱՌՆ ոլորտում ներգրավված առաջատար հաստատությունների ու իշխանության մարմինների իրազեկվածությունը համայնքահեն, գենդերային հավասարության վրա հիմնված ԱՌՆ մոդելի վերաբերյալ, ինչպես նաև խթանել այդ մոդելի ընդունմանը և կիրառումը:

4.4. Մեյվ դը չիլդրեն.

Իրականացնելու է աղետների ռիսկի նվազեցման գործողություններ Երևանի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերի հատուկ հանրակրթական 15 դպրոցներում և խնամք իրականացնող վեց հաստատություններում, նվազեցնելու է այդ հաստատությունների խոցելիությունը և բարձրացնելու է նրանց աղետներին դիմակայելու կարողությունները: Մասնավորապես.

1. Բարձրացնել վերոհիշյալ հաստատությունների իրազեկվածության և պատրաստվածության մակարդակը ԱՌՆ հարցերի վերաբերյալ:
2. Հզորացնել այդ հաստատությունների ԱՌՆ կառավարման մեխանիզմները:
3. Աջակցել այդ հաստատություններին՝ մշակել և իրականացնել աղետների պատրաստվածության և ռիսկի նվազեցման պլանները:
4. Բարձրացնել համայնքների իրազեկվածությունն ու պատրաստվածությունը, ինչպես նաև երեխաների միջոցով խրախուսել ընտանիքներում աղետանկալի պարզագույն միջոցների կիրառմանը՝ նվազեցնելով ընտանիքների խոցելիությունը բնական աղետների նկատմամբ:
5. Համագործակցել բոլոր շահագրգիռ կողմերի հետ և աջակցել ԱՌՆ քաղաքականության մեջ հատուկ կարիքներով երեխաների խնդիրների ներառմանը:

Հոդված 5. Ընդհանուր դրույթներ

5.1. Կնքելով սույն ՓՀ-ն, Կողմերը պահպանում են իրենց առանձին և ուրույն առաքելություններն ու լիազորությունները, ինչպես նաև՝ սեփական պատասխանատվության շրջանակները: Այլ հատուկ ցուցում չլինելու պարագայում՝ Կողմերի միջև սույն ՓՀ-ում ամրագրված համագործակցությունը չի համարվում կամ մեկնաբանվում որպես ընկերակցություն կամ իրավաբանական մարմնի կամ անձի այլ տեսակ: Սույն ՓՀ-ի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել որպես սույն ՓՀ-ի ստորագրումից առաջ կամ հետո երկու կամ ավելի կողմերի միջև եղած այլ համաձայնագրերը կամ պայմանագրերը որևէ կերպ փոխաբինող կամ դրանց միջամտող փաստաթուղթ: Սույն ՓՀ-ն իրենից չի ներկայացնում Կողմերի անունից ստանձնած դրամական միջոցների պարտավորություն: Սույն ՓՀ-ն իրավաբանորեն կատարման համար պարտադիր պարտավորություն չէ Կողմերից որևէ մեկի համար և չի ստեղծում որևէ իրավունքներ մեկ ուրիշ կողմի համար:

5.2. Ուժի մեջ մտնելու ժամկետ՝ սույն ՓՀ-ն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրելու պահից:

5.3. Երրորդ անձանց փաստաթղթեր՝ Կողմերը կարող են պետական և մասնավոր անձանց հետ կնքել վերոնշյալ նախաձեռնություններն իրականացնելու համար անհրաժեշտ այլ պայմանագրեր և փաստաթղթեր:

5.4. Ղեկավարող օրենքներ և կանոններ՝ սույն համաձայնագրի իրականացնող կազմակերպությունները պարտավոր են հատկացնել և ծախսել դրամական միջոցներ, իրականացնել սույն ՓՀ-ով նախատեսված գործողություններ իրենց կանոնակարգերի համաձայն:

5.5. Հրապարակայնություն՝ յուրաքանչյուր կողմ ապահովում է սույն ՓՀ-ի շրջանակներում տրամադրվող աջակցության համար համապատասխան հրապարակայնություն՝ ներառյալ այլ կողմերի ներդրման պատշաճ ճանաչումը: Այլ Կողմն ընդգրկող ցանկացած հրապարակային գործողություն պետք է նախաձեռնվի հաշվի առնելով այդ Կողմի շահերը: Կողմերը ժամանակ առ ժամանակ խորհրդակցում են այս հարցի շուրջ:

5.6. Կողմերն իրավասու չեն որևէ ձևով կամ եղանակով օգտագործել մեկ այլ կողմի անվանումը, պաշտոնական խորհրդանիշները, կնիքները, կրթական նյութերը և այլ փաստաթղթերը, ինչպես նաև այլ կողմերի անվանումների հապավումներն առանց համապատասխան կողմի նախնական թույլտվության:

5.7. Կողմերի կրթական նյութերը և փաստաթղթերը՝ Կողմերն իրավասու չեն որևէ ձևով կամ եղանակով օգտագործել այլ Կողմերի պատրաստած կրթական նյութերը և այլ փաստաթղթերը, մեջբերումներն այլ կողմերի փաստաթղթերից և կրթական նյութերից՝ առանց համապատասխան կողմի թույլտվության կամ մեջբերման աղբյուրը նշելու:

5.8. Լիազոր ներկայացուցիչներ՝ Կողմերը կարող են ունենալ լիազոր ներկայացուցիչներ, որոնց մասին մյուս Կողմերին պետք է տեղեկացնեն գրավոր ծանուցմամբ: Նրանք լիազորված կլինեն ներկայացնելու տվյալ Կողմը բոլոր գործողություններում, բացառությամբ սույն ՓՀ-ում պաշտոնական փոփոխություններ մտցնելը: Յուրաքանչյուր կողմ պետք է գրավոր ծանուցի մյուս Կողմերին իր լիազոր ներկայացուցիչների փոփոխության մասին:

5.9. Տևողություն՝ սույն ՓՀ-ն ուժի մեջ է մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը կամ գործում է ավելի երկար ժամկետով, ինչի շուրջ Կողմերը համաձայնության կզան՝ պայմանով, որ սույն փաստաթուղթը նախքան դրանում սահմանված ժամկետի ավարտը դադարեցված չլինի ստորև ամրագրված դրույթներով:

5.10. Լրացումներ և փոփոխություններ՝ սույն ՓՀ-ն կարող է լրացվել կամ փոփոխվել Կողմերի գրավոր համաձայնությամբ:

5.11. Գործողության ընդհատում կամ դադարեցում՝ յուրաքանչյուր Կողմ իր հայեցողությամբ կարող է ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնել սույն ՓՀ-ն՝ այլ Կողմերին ներկայացնելով իր գրավոր ծանուցումը երեսուն (30) օր առաջ:


5.12. Լեզու՝ սույն ՓՀ-ն կազմված է անգլերեն և հայերեն լեզուներով: Երկու տարբերակների միջև երկիմաստության կամ հակասության պարագայում՝ գերակայում է անգլերեն լեզվով կազմված տարբերակը:

Հոդված 6. Այլ դրույթներ՝


Ի հաստատում վերոհիշյալի՝ Կողմերն ի դեմս իրենց պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների ստորագրում են իրենց անունից սույն Փոխըմբռնման հուշագիրը և հանձնում են այն 2012 թ. _____ ամսաթվով:

Հուշագիրը ստորագրվում է յոթ բնագիր օրինակից:


Պրն. Արմեն Երիցյան
Նախարար




Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն




“Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմ” հիմնադրամ


Պրն. Արմեն Ղոզոյան
Տնօրեն


ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ


Տկն. Հերիեն Արեւս
Ներկայացուցիչ


ՕԲՄՅԱՍ


Տկն. Սարգսյան Հակոբյան
Հայաստանյան գրասենյակի տնօրեն

Հայկական Կարմիր խաչի ընկերություն


Պրն. Միխիթար Մնացականյան
Նախագահ

Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչություն


Տկն. Իրինա Սաղոյան
Տնօրեն